Մամլո հաղորդագրություն. ԱՄՀ-ի առաքելության այցը Հայաստան

Սեպտեմբեր 19, 2007 թ.

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) աշխատակազմի ներկայացուցիչներից բաղկացած խումբը՝ տկն. Մարթա Կաստելո-Բրանկոյի գլխավորությամբ, 2007 թ. սեպտեմբերի 5-19 այցելեց Երևան՝ Աղքատության կրճատման և տնտեսական աճի (ԱԿՏԱ) ծրագրի հինգերորդ ամփոփիչ ստուգման համար անհրաժեշտ քննարկումներ անցկացնելու և 2008 թ. բյուջեի վերաբերյալ պայմանավորվածություններ ձեռք բերելու նպատակով: Տնտեսական քաղաքականության քննարկումների ավարտական փուլին մասնակցեց նաև ԱՄՀ-ի փոխտնօրեն պրն. Լորենսո Պերեսը: Առաքելությունը հանդիպումներ ունեցավ կառավարական պաշտոնյաների, ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) աշխատակիցների, գործարար աշխարհի ներկայացուցիչների և միջազգային դոնորների հետ: Առաքելության կարևորագույն խնդիրներից էր պայմանավորվածություն ձեռք բերել 2007 թ. տարվա մնացած մասի և 2008 թվականի տնտեսական քաղաքականության ցուցանիշների շուրջ՝ հաշվի առնելով արտարժույթի մեծածավալ ներհոսքը, ինչպես նաև կենսաթոշակների նախատեսվող ավելացումների և 2009 թվականին գազի ներմուծման գների հնարավոր բարձրացման կապակցությամբ սպասվող ծախսումային ճնշումները կառավարելու անհրաժեշտությունը:

Մակրոտնտեսական զարգացումները և հեռանկարները

Պահպանվում են տնտեսության բարձր ցուցանիշները, ներառյալ երկնիշ տնտեսական աճը, ցածր գնաճը և հարկահավաքման մակարդակի ավելացումը: 2008 թվականի և հետագա տարիների հեռանկարը մնում է դրական՝ պայմանավորված ներդրումների բարենպաստ հեռանկարով և արտաքին պաշտոնական տրանսֆերտների առկայությամբ: Ներմուծման աճի տեմպը շարունակում է գերազանցել արտահանման աճի տեմպը, սակայն արտասահմանից կատարվող փոխանցումների մեծածավալ ներհոսքը պետք է որ մեղմի ընթացիկ հաշվի պակասուրդի վրա դրամի արժևորման ազդեցությունը: Հաշվի առնելով, որ ակնկալվում է արտարժութային ներհոսքի պահպանում, երկրի արտաքին մրցունակությունը պահպանելու համար իշխանություններին անհրաժեշտ է շարունակել դրամավարկային և հարկաբյուջետային շրջահայաց քաղաքականություն իրականացնել, ինչպես նաև վերացնել տնտեսական աճի ճանապարհին առկա կառուցվածքային խոչընդոտները:

ԱԿՏԱ ծրագրի օժանդակությամբ իրականացվող աշխատանքները շարունակում են ընթանալ ըստ նախատեսվածի: Ծրագրի միջոցառումներն ապագայում ևս կենտրոնացած կլինեն մակրոտնտեսական կայունության պահպանման և կառուցվածքային այնպիսի բարեփոխումների իրագործման ուղղությամբ, որոնց արդյունքում կկատարելագործվի հարկային վարչարարությունը և կբարելավվի ֆինանսական միջնորդությունը:

Հարկաբյուջետային քաղաքականություն

Վերջին տարիների շրջահայաց հարկաբյուջետային մոտեցումները նպաստել են ցածր գնաճի, տնտեսական աճի բարձր տեմպերի և պետական պարտքի ցածր մակարդակի ապահովմանը: Ապագայում մակրոտնտեսական կայունությունը և երկրի արտաքին մրցունակությունը պահպանելու, ինչպես նաև օտարերկրյա ներդրումները քաջալերելու համար խիստ կարևոր կլինի շարունակել հարկաբյուջետային հիմնավոր քաղաքականության իրագործումը: Բացի այդ, թափանցիկ և ոչ հայեցողական եղանակով հարկային եկամուտներ/ՀՆԱ գործակցի բարձրացումը շատ կարևոր կլինի ենթակառուցվածքի ծրագրեր ֆինանսավորելու, աղքատության կրճատման նպատակով իրականացվող կարևորագույն ծառայություններն ընդլայնելու և գործարարության միջավայրը բարելավելու տեսակետից:

Դրամավարկային քաղաքականություն

Գնաճը շարունակում է մնալ իշխանությունների նպատակադրած միջակայքում (4 ±1.5 տոկոս), սակայն Կենտրոնական բանկը պետք է պատրաստ լինի ավելի զսպողական դրամավարկային քաղաքականություն իրականացնել, եթե սննդամթերքի և ներմուծվող էներգակիրների բարձր գներն առաջացնեն գնաճային ճնշումներ: Տնտեսության վարկավորման ծավալների վերջին շրջանի ավելացումը դրական զարգացում է, որը, օտարերկրյա նոր բանկերի սպասվող մուտքի հետ մեկտեղ, պետք է որ նպաստի ֆինանսական միջնորդության ավելացմանը: Բանկերի վարկային ներդրումների արագընթաց ավելացման հետ կապված հնարավոր ռիսկերից խուսափելու համար ՀՀ ԿԲ-ն պետք է շարունակի բանկերին ներկայացնել նորմատիվային խիստ պահանջներ և խրախուսի բանկերի կողմից ռիսկերի կառավարման և վարկառուների թափանցիկության հետագա բարելավումը (կատարելագործելով կորպորատիվ կառավարումը և հաշվապահական հաշվառումը, ինչպես նաև՝ ապահովելով վարկային բյուրոյի գործունեությունը):

Կառուցվածքային բարեփոխումներ

Չնայած որ գործարարության միջավայրը զգալիորեն բարելավվել է, վերջին շրջանի մի քանի հետազոտություններ վկայում են որոշ էական մարտահրավերների պահպանման մասին, հատկապես հարկային վարչարարության, վարկային միջոցների հասանելիության և ներպետական մրցակցության ոլորտներում: Նշված թերությունների հաղթահարումը խիստ կարևոր կլինի տնտեսության արտադրողականությունը և Հայաստանի մրցունակությունը բարձրացնելու համար: Այս առումով բարենպաստ զարգացումներ են նոր բանկերի մուտքը և վարկային ներդրումների աճի տեմպերի արագացումը: Այնուհանդերձ, հարկային վարչարարությունը կատարելագործելու և ներպետական մրցակցությունը խրախուսելու համար անհրաժեշտ են հետագա գործողություններ: Այդ առումով առաքելությունը հիմնական գերակայություններ է համարում.

- Հարկային վարչարարության արդիականացման ուղղությամբ լուրջ ջանքեր գործադրելը, միաժամանակ բարձրացնելով հարկահավաքման արդյունավետությունը, թափանցիկությունը և արդարացիությունը: Պետական եկամուտների ծրագրային ցուցանիշները կատարելու համար չպետք է օգտագործվեն հայեցողական այնպիսի միջոցներ, ինչպիսիք են ԱԱՀ-ի վերադարձի՝ քննության ընթացքի մեջ գտնվող հայտեր կուտակելը և հարկային կանխավճարներ պահանջելը:

- Ներմուծման գործարար գործունեության մեջ մենաշնորհային գործելակերպը նվազեցնելու ուղիներ փնտրելը, որպեսզի փոխարժեքի փոփոխություններն առավել համարժեքորեն արտացոլվեն ներպետական գների մեջ:

- Թույլ տալ, որպեսզի ներկայում գործող հարկային արտոնությունները սպառվեն, ինչպես նաև չներդնել նոր արտոնություններ կամ հարկային համաներումներ: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ձեռնարկությունների զարգացումը խրախուսելու համար խիստ կարևոր է վերացնել առկա խոչընդոտները և բարդությունները, որպեսզի ապահովվեն տնտեսական գործունեության հավասար պայմաններ, և էլ ավելի բարելավվի գործարարության միջավայրը: